ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ

Տեղեկատվական ամփոփագիր ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար



Հրապարակման ամսաթիվ՝ փետրվար, 2024

Ուժի մեջ է սկսած՝ օգոստոս, 2023

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Գործող պայմաններին ծանոթանալու, ինչպես նաև լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով այցելեք մեր ինտերնետային կայք՝ www.hsbc.am, ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարեք +374 60 655 000 հեռախոսահամարով:

HSBC

Բովանդակություն

Ընդհանուր դրույթներ 3

Հաշիվների բացում և սպասարկում 4

Միջազգային VISA PLUS բանկոմատային քարտեր 6

Փոխանցումներ / Բանկային մուրհակներ 7

Հաշիվների հեռակառավարում 10

Բանկային հաշվի քաղվածքներ / այլ փաստաթղթեր 11

Չեկեր 13

Ընդհանուր դրույթներ

- Սույն ամփոփագրում ներկայացված են «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից տրամադրվող ընդհանուր ծառայությունների սակագները:
  HSBC STATUS և HSBC PLUS հաճախորդներին տրամադրվող հավելյալ ծառայություններին և արտոնյալ սակագներին ծանոթացե՛ք մեր ինտերնետային կայքում՝ www.hsbc.am կամ այդ ծառայությունների տեղեկատվական ամփոփագրերում:
- Սակագներով նախատեսված վճարները գանձվում են ՀՀ դրամով: Որպես կանոն՝ դրանք Բանկի կողմից գանձվում են այն բանկային հաշվից, որով կատարվում է համապատասխան գործառնությունը:
  Ընդ որում, արտարժութային բանկային հաշվից գանձվելու դեպքում՝ Բանկն իրավունք ունի գանձվելիք գումարի համարժեք արտարժույթը փոխարկել ՀՀ դրամի՝ կիրառելով Բանկի կողմից այդ արժույթի համար սահմանված առքի փոխարժեքը:
  Բացառություն են կազմում Բանկի կողմից ինքնաշխատ (ավտոմատ) կերպով և սահմանված պարբերականությամբ գանձվող սպասարկման վճարները, որոնց դեպքում կիրառվում է այդ արժույթի համար տվյալ օրվա ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքը:
  Արտարժութային գործարքների նկատմամբ կիրառվող տոկոսային միջնորդավճարները ՀՀ դրամով արտահայտելու համար կիրառվում է այդ արժույթի համար տվյալ օրվա ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքը:
- Հատուկ առաջարկների շրջանակներում, որոնք նախատեսված են Բանկի աշխատավարձային հաճախորդների համար, Բանկն իր հայեցողությամբ կարող է կիրառել զեղչեր «Ծառայությունների սակագներով» նախատեսված վճարների նկատմամբ կամ ընդհանրապես չկիրառել համապատասխան վճարները:
- Այս տեղեկատվական ամփոփագրում ներկայացված բանկային ծառայությունների վերաբերյալ հավելյալ տեղեկատվությունը հասանելի է մեր ինտերնետային կայքում՝ www.hsbc.am, կամ «Հաճախորդների բանկային հաշիվների, բանկային ավանդների, էլեկտրոնային բանկային ծառայությունների և բանկային այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ (ֆիզիկական անձանց, այդ թվում անհատ ձեռնարկատերերի համար)» տեղեկատվական ամփոփագրում:
- **Բանկի կողմից տրամադրվող ծառայությունների բոլոր պայմանները և սակագները կարող են փոփոխվել, ինչի մասին հաճախորդները կտեղեկացվեն նախապես:** Գործող պայմանների և սակագների, ինչպես նաև դրանց փոփոխությունների վերաբերյալ ամբողջական և մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ, այցելել մեր ինտերնետային կայք՝ www.hsbc.am, կամ զանգահարել +374 60 655 000 հեռախոսահամարով:

Հաշիվների բացում և սպասարկում[1]

Կարևոր նշում

Բանկային հաշվին առկա դրամական միջոցների նկատմամբ կիրառվում է 0% տոկոսադրույք և տոկոսներ չեն վճարվում:

Հաշվի բացման վճար

Խնայողական հաշիվ[2]	3 000 ՀՀ դրամ
Ընթացիկ հաշիվ	
• Ֆիզիկական անձինք	3 000 ՀՀ դրամ
• Անհատ ձեռնարկատերեր	5 000 ՀՀ դրամ
Մինչև 18 տարեկան երեխայի հաշիվ	**Վճար չի կիրառվում**
Ժամկետային ավանդի հաշիվ (ներառյալ կուտակային)[3]	**Վճար չի կիրառվում**
Էսքրոու հաշիվ[4]	Էսքրոու գումարի 0,5%-ը (նվազագույնը՝ 100 000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 500 000 ՀՀ դրամ)

Լրացուցիչ հաշվի բացման վճար

Ընթացիկ հաշիվ	3 000 ՀՀ դրամ
Խնայողական հաշիվ	3 000 ՀՀ դրամ

Ամսական սպասարկման վճար[5]

Ամսական սպասարկման վճարը գանձվում է անկախ այն փաստից՝ հաճախորդը հաշիվն օգտագործում է, թե՝ ոչ:

Ընթացիկ հաշիվ	
◆ Ֆիզիկական անձինք	300 ՀՀ դրամ
◆ Անհատ ձեռնարկատերեր	**500 ՀՀ դրամ, եթե բավարարված է միջին եռամսյակային մնացորդի պահանջը (տե՛ս հաջորդիվ)**
Խնայողական հաշիվ	**Վճար չի կիրառվում, եթե բավարարված է միջին ամսական մնացորդի պահանջը (տե՛ս հաջորդիվ)**

---

[1] Հաշիվների բացման և սպասարկման ընթացակարգին և այլ մանրամասներին ծանոթացե՛ք «Ֆիզիկական անձանց բանկային հաշիվներ» տեղեկատվական ամփոփագրում:

[2] **Խնայողական հաշիվ կարող են բացել միայն ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդները:**

[3] **ժամկետային ավանդի հաշիվը բացվում է միայն ընթացիկ/խնայողական հաշվի առկայության դեպքում:**

[4] Էսքրոու հաշիվը Բանկի կողմից տրամադրվող միանվագ ծառայություն է, որը նախատեսված է անշարժ գույքի առք ու վաճառքի գործարքի կողմերի միջև հաշվարկների ապահով իրականացման համար:

[5] **Ընթացիկ և խնայողական հաշիվների ամսական սպասարկման վճար չի կիրառվում, եթե վերջիններս հանդիսանում են ժամկետային ավանդները սպասարկող հաշիվներ:**

Միջին ամսական մնացորդի պահանջ (ֆիզիկական անձինք)

Ֆիզիկական անձանց խնայողական հաշվի համար գործում է միջին ամսական մնացորդի պահանջ 100 000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթի չափով, որը բավարարելու դեպքում խնայողական հաշվի համար ամսական սպասարկման վճար չի կիրառվում: Պահանջին չբավարարելու դեպքում խնայողական հաշվի համար կիրառվում է 2 000 ՀՀ դրամ ամսական սպասարկման վճար:

Միջին եռամսյակային մնացորդի պահանջ (անհատ ձեռնարկատերեր)

Անհատ ձեռնարկատերերի հաշվի սպասարկման համար յուրաքանչյուր ամիս գանձվում է լրացուցիչ 100 000 ՀՀ դրամ, եթե չի պահպանվում սույն նշված պայմանը.

Բանկում սպասարկվող բոլոր հաշիվների միջին եռամսյակային մնացորդների հանրագումարը որևէ ամսվա առաջին աշխատանքային օրվա դրությամբ նախորդող երեք ամիսների համար մեծ է 5 000 000 ՀՀ դրամից կամ արտարժութային հաշիվների դեպքում դրան համարժեք արտարժույթից:

Նվազագույն մուտք

Ընթացիկ հաշիվ	Չի պահանջվում
Խնայողական հաշիվ	Չի պահանջվում
Ժամկետային ավանդի հաշիվ (ներառյալ կուտակային)	100 000 ՀՀ դրամ 500 ԱՄՆ դոլար 500 եվրո

Նվազագույն տարեկան շրջանառության պահանջ (Անհատ ձեռնարկատերեր)

Անհատ ձեռնարկատերերի նվազագույն տարեկան շրջանառությունը, ըստ նախորդ ֆինանսական տարվա հարկային հաշվետվությունների և/կամ Բանկի կարծիքով այլ հավաստի տվյալների, պետք է կազմի 200 000 000 ՀՀ դրամ և ավելին:

Արտարժույթով հաշիվներ

Արտարժութային հաշիվների[6] բացման և սպասարկման ամսական վճարների համար կիրառվում են սույն ամփոփագրում նշված միևնույն պայմանները և վճարները:

Կարևոր նշում

ՀՀ դրամից բացի ցանկացած այլ արժույթով բանկային հաշիվը ենթադրում է արտարժութային ռիսկ՝ կապված փոխարժեքի տատանումների հետ: Մասնավորապես, տվյալ արտարժույթի փոխարժեքի տատանումների դեպքում ՀՀ դրամով Ձեր գումարի համարժեքը կարող է փոփոխվել:

[6] Բանկի կողմից առաջարկվող արտարժութային հաշվի տեսակներին (ըստ արժույթի) կարող եք ծանոթանալ մեր ինտերնետային կայքում՝ www.hsbc.am:

Միջազգային VISA PLUS բանկոմատային քարտեր

Քարտի թողարկում	**Վճար չի կիրառվում**
Քարտի սպասարկման վճար	
◆ Ֆիզիկական անձինք	**Վճար չի կիրառվում**
◆ Անհատ ձեռնարկատերեր	1 000 ՀՀ դրամ ամսական
Հավելյալ քարտի թողարկում	3 000 ՀՀ դրամ
Հավելյալ քարտի սպասարկման վճար	
◆ Ֆիզիկական անձինք	6 000 ՀՀ դրամ տարեկան
◆ Անհատ ձեռնարկատերեր	1 000 ՀՀ դրամ ամսական
Քարտի վերաթողարկում[2]	3 000 ՀՀ դրամ
Բանկում սպասարկվող հաշիվների միջև փոխանցում բանկոմատով	**Վճար չի կիրառվում**
Բանկում սպասարկվող հաշիվների միջև բանկոմատով փոխանցման օրական սահմանաչափ	
◆ Ֆիզիկական անձինք	1 000 000 ՀՀ դրամ
◆ Անհատ ձեռնարկատերեր	3 000 000 ՀՀ դրամ
Կանխիկացման վճար Բանկին պատկանող բանկոմատներից	**Վճար չի կիրառվում**
Կանխիկացման վճար այլ բանկերի (ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս) բանկոմատներից[3]	2 000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր գործարքի համար
Կանխիկացման օրական սահմանաչափ	
◆ Ֆիզիկական անձինք	500 000 ՀՀ դրամ
◆ Անհատ ձեռնարկատերեր	500 000 ՀՀ դրամ
Բանկոմատով կանխիկի մուտքագրման օրական սահմանաչափ	1 000 000 ՀՀ դրամ

[2] **Օնլայն կամ Հեռախոսային բանկային ծառայության միջոցով քարտի վերաթողարկման պարագայում վճար չի կիրառվում:** Քարտը կուղարկվի Ձեր նախընտրած մասնաճյուղ դիմումի ստացման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում:

[3] **Ամերիաբանկին պատկանող բանկոմատներից կանխիկի դուրսբերման դեպքում վճար չի կիրառվում:**

Փոխանցումներ/ Բանկային մուրհակներ

Ելքային փոխանցումներ

Ներբանկային փոխանցումներ

Բանկում սպասարկվող հաշիվների միջև փոխանցումներ	**Վճար չի կիրառվում**

Փոխանցումներ ՀՀ դրամով (ՀՀ տարածքում)[3]

Ելքային փոխանցումներ[4,5]	300 ՀՀ դրամ
Բանկային մուրհակի թողարկում	6 000 ՀՀ դրամ

Փոխանցումներ ԱՄՆ դոլարով/եվրոյով (ՀՀ տարածքում)

Ելքային փոխանցումներ[6]	5 000 ՀՀ դրամ

Ելքային փոխանցումներ ԱՄՆ դոլարով/ եվրոյով (ՀՀ տարածքից դուրս)

Ելքային փոխանցումներ կանխիկ մուտքագրված գումարի դեպքում	0.3% (նվազագույնը 6 000 ՀՀ դրամ)
Ելքային փոխանցումներ անկանխիկ գումարի / արտարժույթի փոխանակման դեպքում	0.1% (նվազագույնը 6 000 ՀՀ դրամ)
Հեռախոսային բանկային ծառայության միջոցով ելքային փոխանցումներ	0.1% (նվազագույնը 6 000 ՀՀ դրամ)
Օնլայն բանկային ծառայության միջոցով ելքային փոխանցումներ	6 000 ՀՀ դրամ

[3] ՀՀ տարածքում ՀՀ դրամով փոխանցումների դեպքում, եթե փոխանցվող գումարը պարունակում է լումա, ապա այն կկլորացվի ստանդարտ մոտեցմամբ՝ մինչև տասնորդական նիշը:

[4] Եթե վճարման հանձնարարականը (մինչև 50 միլիոն ՀՀ դրամ) ներկայացվում է մասնաճյուղ կամ Հեռախոսային բանկային ծառայության միջոցով (ըստ Հեռախոսային բանկային ծառայության օրական սահմանաչափի) մինչև ժամը 14:00, ապա այն կատարվում է նույն օրը: Եթե այն ներկայացվում է ժամը 14:00-ից հետո, բայց ոչ ուշ, քան 15:00-ն և պահանջվում է կատարել նույն օրը, ապա կիրառվում է գանձում 5 000 ՀՀ դրամի չափով: Օնլայն/ Մոբայլ ծառայությունների միջոցով (մինչև 50 միլիոն ՀՀ դրամ) մինչև ժամը 15:00-ն ներկայացված վճարման հանձնարարականները կատարվում են նույն օրն առանց լրացուցիչ գանձման: Մնացած բոլոր դեպքերում վճարման հանձնարարականները կկատարվեն համաձայն 4-րդ հղման:

[5] **Օնլայն/Մոբայլ բանկային ծառայությունների միջոցով ներկայացված հանձարարականների համար վճար չի կիրառվում:**

[6] Մինչև ժամը 14:00 ներկայացված հանձնարարականները կկատարվեն առավելագույնը հաջորդ գործառնական օրվա ընթացքում: Ժամը 14:00-ից հետո ներկայացված հանձնարարականները կկատարվեն հաջորդ գործառնական օրվա ընթացքում:

Փոխանցումներ ԱՄՆ դոլարից/եվրոյից բացի Բանկում սպասարկվող այլ արտարժույթներով մասնաճյուղում կամ Հեռախոսային բանկային ծառայության միջոցով

Հաշվից փոխանցումներ կանխիկ մուտքագրված գումարի դեպքում	3% (նվազագույնը 6 000 ՀՀ դրամ)
Հաշվից փոխանցումներ անկանխիկ մուտքագրված գումարի / արտարժույթի փոխանակման դեպքում	0.3% (նվազագույնը 6 000 ՀՀ դրամ)

Փոխանցումներ ԱՄՆ դոլարից/եվրոյից բացի Բանկում սպասարկվող այլ արտարժույթներով Օնլայն բանկային ծառայության միջոցով

Ելքային փոխանցումներ հաշվից	6 000 ՀՀ դրամ

ՀՀ տարածքից դուրս փոխանցումների համար

Միջնորդ/շահառու բանկ(եր)ի միջնորդավճարները փոխանցողի հաշվից գանձման դեպքում, երբ շահառուն գումարը պետք է ստանա առանց պահումների[1]	5 000 ՀՀ դրամ
Վճարման հանձնարարականի ուսումնասիրման վճար (գանձվում է անկախ ուսումնասիրման արդյունքներից)	20 000 ՀՀ դրամ

Արտոնյալ սակագին, որը կիրառելի է.

- ԱՄՆ դոլարով/եվրոյով կանխիկ մուտքագրված գումարների դեպքում,
- Բանկի կողմից սպասարկվող այլ արժույթներով անկանխիկ մուտքագրված գումարների / արտարժույթի փոխանակման դեպքում:

Կախված շրջանառության ծավալներից՝ հաշվետեր հաճախորդները կարող են օգտվել հետևյալ արտոնյալ սակագնից.

Վերջին 3 ամիսների ընթացքում ելքային փոխանցումների միջին ամսական ծավալը արտահայտված ԱՄՆ դոլարով 50 000 և ավելի է	0.1% (նվազագույնը 6 000 ՀՀ դրամ)

[1] Եթե փոխանցման շղթայում առկա է մեկից ավելի միջնորդ բանկ, որոնց կողմից գանձված վճարների հանրագումարը գերազանցում է 20 000 ՀՀ դրամի համարժեքը, ապա Ձեր վճարած 5 000 ՀՀ դրամի և Բանկից փաստացի պահված միջնորդավճարների տարբերությունը կգանձվի Ձեր հաշվից:

Մուտքային փոխանցումներ բոլոր արժույթներով

ՀՀ տարածքից փոխանցված գումարների մուտքագրում հաշվին	**Վճար չի կիրառվում**
ՀՀ տարածքից դուրս փոխանցված գումարների մուտքագրում հաշվին, եթե փոխանցողը չի վճարել միջնորդավճարները	6 000 ՀՀ դրամ

Վճարման հանձնարարականի փոփոխում կամ չեղարկում

ՀՀ տարածքում փոխանցումների դեպքում	5 000 ՀՀ դրամ
ՀՀ տարածքից դուրս փոխանցումների դեպքում	20 000 ՀՀ դրամ

Կարևոր նշումներ.

Եթե փոխանցված միջոցներն արդեն վճարված են շահառուին, ապա Բանկը պատասխանատվություն չի կրում գումարների վերադարձման համար:

Հաճախորդի ցանկությամբ միջնորդ/շահառու բանկ(եր)ի գանձումները կարող են կատարվել թե՛ փոխանցողի, թե՛ ստացողի միջոցների հաշվին՝ համաձայնեցնելով Բանկի հետ:

Հաճախորդն իրավունք ունի ստանալ անդորրագիր Բանկի կողմից մատուցված յուրաքանչյուր ծառայության կատարման վերաբերյալ:

Հաշիվների հեռակառավարում

Օնլայն և Մոբայլ բանկային ծառայություններ[1]

Օնլայն բանկային ծառայության գրանցում	**Վճար չի կիրառվում**
Մոբայլ բանկային ծառայության գրանցում[2]	**Վճար չի կիրառվում**
Ամսական սպասարկում	**Վճար չի կիրառվում**
Թվային անվտանգության սարքի տրամադրում	**Վճար չի կիրառվում**
Ֆիզիկական անվտանգության սարքի փոխարինում նորով	
◆ Անսարքության դեպքում	**Վճար չի կիրառվում**
◆ Կորստի, գողության կամ թվային անվտանգության սարքից հետանցում կատարելու դեպքում	5 000 ՀՀ դրամ[3]
SMS ծանուցումների ծառայություն[4]	**Վճար չի կիրառվում**
Բանկային ծառայություններ	Համաձայն Օնլայն բանկային ծառայությունների սակագների[4]

Հեռախոսային բանկային ծառայություն

Հեռախոսային բանկային ծառայության գրանցում	1000 ՀՀ դրամ
Ամսական սպասարկում	**Վճար չի կիրառվում**
Բանկային ծառայություններ	Համաձայն Հեռախոսային բանկային ծառայությունների սակագների[5]

[1] **Ծառայությունները տրամադրվում են միայն ֆիզիկական անձանց:**
[2] **Հասանելի է միայն Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան Օնլայն բանկային ծառայություն ունեցող հաճախորդներին:**
[3] **Ներառյալ՝ ԱԱՀ-ն:**
[4] **Ծառայությունը ակտիվացնելու համար պարտադիր պայման է գրանցվել Օնլայն բանկային ծառայությանը:**
[5] Հասանելի է Բանկի ինտերնետային կայքում՝ www.hsbc.am, ինչպես նաև մասնաճյուղերում:

Բանկային հաշվի քաղվածքներ/ այլ փաստաթղթեր

Բանկային հաշվի քաղվածքների և դրանց կրկնօրինակների առաքում/ տրամադրում

Փոստով ՀՀ տարածքում	**Վճար չի կիրառվում**
Օնլայն բանկային ծառայության միջոցով	**Վճար չի կիրառվում**
Բանկի մասնաճյուղում	**Վճար չի կիրառվում**
Էլեկտրոնային փոստով	**Վճար չի կիրառվում**

Այլ ծառայություններ

Լիազորագրի ձևակերպում	5 000 ՀՀ դրամ
Հաշվեկշռի հաստատման/ բանկային հաշվի/վարկի վերաբերյալ տեղեկանքներ[6]	5 000 ՀՀ դրամ
Հաշվեկշռի հաստատման / բանկային հաշվի/վարկի վերաբերյալ տեղեկանքներ Օնլայն կամ Հեռախոսային Բանկային ծառայության միջոցով դիմելու դեպքում[7]	1 000 ՀՀ դրամ
Հիփոթեքային վարկի քաղվածք՝ ընտրված ժամանակահատվածի համար[8]	**Վճար չի կիրառվում**
Անհատ ձեռնարկատերերին աուդիտի նպատակներով հաշվի վերաբերյալ տեղեկությունների տրամադրում	10 000 ՀՀ դրամ
Բանկային հաշվի յուրաքանչյուր 1 ամսվա քաղվածքի, 1 ամսվա հաշվի պատմության կամ յուրաքանչյուր 1 գործարքի վավերացման փաստաթղթի կրկնօրինակի տրամադրում (եթե հայցվում է 6 ամսից ավել վաղեմության տեղեկատվություն)	**3 000 ՀՀ դրամ՝** մասնաճյուղում դիմելիս **1 000 ՀՀ դրամ՝** Օնլայն կամ Հեռախոսային բանկային ծառայությամբ դիմելիս
Ոչ հաշվետեր հաճախորդներին բանկային հաշվի բացակայության վերաբերյալ տրամադրվող տեղեկանք	5 000 ՀՀ դրամ

[6] Հաշվեկշիռը հաստատող տեղեկանքը տրամադրվում է հայտը ստանալու օրվա և ժամի դրությամբ:
[7] Տեղեկանքը/փաստաթղթի կրկնօրինակը կուղարկվի Ձեր նախընտրած մասնաճյուղ դիմումի ստացման օրվանից 2 աշխատանքային օրվա ընթացքում:
[8] Հաճախորդի կողմից քաղվածքի ստացման նպատակը կարող է լինել օրինակ՝ «ՀՀ ՊԵԿ ներկայացնելու համար», «Անձնական օգտագործման համար» և այլն:

Կանխիկով գործարքներ/ գործառնություններ

Կանխիկի մուտքագրում մասնաճյուղերում	**Վճար չի կիրառվում**
Կանխիկի մուտքագրում բանկոմատի միջոցով[1]	**Վճար չի կիրառվում**
Կանխիկ մուտքագրված գումարների կանխիկացում (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո)[2]	**Վճար չի կիրառվում**
Անկանխիկ գումարների կանխիկացում մասնաճյուղում	
◆ ՀՀ դրամով[3]*	0.2% (նվազագույնը 1 000 ՀՀ դրամ)
◆ ԱՄՆ դոլար/եվրո[4]*	1% (նվազագույնը 1 000 ՀՀ դրամ)
Կանխիկ/անկանխիկ գումարների կանխիկացում այլ արժույթներով[5]	3%
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի կողմից չթողարկված քարտերից կանխիկացում Բանկի POS տերմինալներով	1%
Արտարժույթով հնամաշ/շրջանառությունից դուրս եկած թղթադրամների փոխանակում, եթե պահպանված են անհրաժեշտ պաշտպանական հատկանիշները և մասերը[6]	5%
ՀՀ դրամով վճարունակ հնամաշ/շրջանառությունից դուրս եկած թղթադրամների փոխանակում	**Վճար չի կիրառվում**

[1] Բանկոմատային քարտին կանխիկի մուտքագրման առավելագույն օրական սահմանաչափ՝ 1 000 000 ՀՀ դրամ:

[2] Այլ արժույթների համար տե՛ս անկանխիկ գումարների կանխիկացման սակագները:

[3] Տվյալ սակագինը կիրառելի չէ ավանդների տոկոսագումարների, արտարժույթի փոխարկման գործարքների (այդ թվում՝ մինչև 2023թ. օգոստոսի 18-ը կատարված փոխարկումների) և վարկերի գումարների կանխիկացման դեպքում:

[4] Տվյալ սակագինը կիրառելի է վարկերի գումարների կանխիկացումների դեպքում: Տվյալ սակագինը կիրառելի չէ արտարժույթի փոխարկման գործարքների գումարների (այդ թվում՝ մինչև 2023թ. օգոստոսի 18-ը կատարված փոխարկումների) և ավանդների տոկոսագումարների կանխիկացման դեպքում:

[5] Կիրառելի է արտարժույթի փոխարկման գործարքների գումարների (այդ թվում՝ մինչև 2023թ. օգոստոսի 18-ը կատարված փոխարկումների), ինչպես նաև տրամադրված վարկերի գումարի կանխիկացումների դեպքում:

[6] **Ծառայությունը տրամադրվում է Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի հաճախորդներին: Ոչ հաշվետեր հաճախորդներին ծառայությունը տրամադրվում է միայն արտարժույթի փոխանակման գործարք իրականացնելիս** (արտարժույթի փոխանակման օրական առավելագույն սահմանաչափ՝ 400 000 ՀՀ դրամ):

* Կանխիկ են համարվում 91 օր և ավել պայմանագրային ժամկետով այն ավանդների մայր գումարները, որոնք չեն դադարեցվել մինչև պայմանագրային ժամկետի ավարտը, ինչպես նաև ավելի կարճ պայմանագրային ժամկետով այն ավանդների մայր գումարները, որոնք անընդմեջ վերակնքվել են որպես ավանդ 91 օր և ավել ժամանակահատվածում:

Չեկեր

Չեկեր/Չեկային գրքույկ[7]

Չեկային գրքույկի տրամադրում	**Վճար չի կիրառվում**
Վճարման արգելանքի կիրառում	3 000 ՀՀ դրամ
Վճարման արգելանքի չեղարկում	**Վճար չի կիրառվում**
Անբավարար մնացորդի պատճառով չեկի վերադարձ	5 000 ՀՀ դրամ

Այլ չեկեր

Չեկի ընդունում	50 000 ՀՀ դրամ[8]
Առանց վճարման վերադարձված չեկի դիմաց գանձվում է միանվագ վճար	10 000 ՀՀ դրամ + միջնորդ/վերադարձնող բանկերի գանձումները

Կարևոր նշում

Այլ բանկերի չեկերը ընդունվում են միայն հաշվետեր հաճախորդներից՝ նվազագույնը 6 (բանկային չեկերի համար) և 12 (անձնական և կորպորատիվ չեկերի համար) ամիսների հաշվի բավարար պատմության առկայության պարագայում:

[7] **Չեկային գրքույկներ տրամադրվում են ընթացիկ հաշիվ ունեցող հաճախորդներին միայն ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով**

[8] Սակագինն իր մեջ ներառում է փոստային ծառայության միջոցով չեկը թողարկող բանկ ուղարկելու հետ կապված ծախսերը:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

© «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, 2024:

Բոլոր իրավունքները պահպանված են: